ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՅԼ ՊՈԼԻԳՐԱՖԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2020/1-2

ք. Երևան «11» 02 2020թ.

ՀՀ Վիճակագրական կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Դավիթ Քոչարյան ԱՁ-ն, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1833738 (մեկ միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար յոթ հարյուր երեսունութ) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև

աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **19** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ վիճակագրական կոմիտե	Դավիթ Քոչարյան ԱՁ
ք. Երևան, Կառավարական տուն 3	Ք. Երևան, Վ. Համբարձումյան 4
ՀՎՀՀ 02507509	«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Հ/Հ 2471202340560000
Հ/Հ 900011011021	ՀՎՀՀ 37488199
Գլխավոր քարտուղար	Դ. Քոչարյան
Ա. Հայրապետյան	
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«11» փետրվարի 2020թ. կնքված N ՀՀ ԿԿ-ԳՀԱՇՁԲ-2020/1-2
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Միավոր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գինը /ՀՀ հազ. դրամ/	Ընդհանուր քանակը	I եռ. /մինչև մարտի 31-ը/		II եռ.		III եռ.		IV եռ. /մինչև նոյեմբերի 30-ը/	
								քանակ	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակ	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակ	գինը /հազ. ՀՀ դրամ/	քանակ	գինը /հազ. ՀՀ դրամ/
11	79821200-758	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-վի (տարեկան)/**	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա	հատ	7.96	9.95	1250							1250	9.95
12	79821200-759	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 7-ժավ (տարեկան)/**	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	7.99	15.98	2000							2000	15.98
13	79821200-760	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 1-բնակֆոնդ տարեկան/**	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա:	հատ	7.96	9.95	1250							1250	9.95
15	79821200-762	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 1-ԹԱՇ (եռամսյակային) վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգ/**	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.78	9.45	2500	2500	9.45						

16	79821200-763	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ոչ պետական փոքր և գերփոքր կազմակերպություններում թափուր աշխատատեղերի, աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին հետազոտության հարցաթերթ/**	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	7.98	19.95	2500							2500	19.95
17	79821200-764	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 1-Ա (տարեկան)/**	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, կազմված 3 թերթից մետաղակար, փաթեթավորված 100 հատերով:	հատ	14.85	133.65	9000							9000	133.65
20	79821200-767	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 1-կադրերի ուսուցում (տարեկան)/**	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.65	14.6	4000							4000	14.6
27	79821200-774	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / 2-ԳԻՆ ԳՅՈՒՂ/**	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, կազմված 4 թերթից մետաղակար	հատ	19.8	47.52	2400	600	11.88	600	11.88	600	11.88	600	11.88
28	79821200-775	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-գին (արտադրանք) (ամսական)/**	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա:	հատ	3.75	12.75	3400	850	3.1875	850	3.1875	850	3.1875	850	3.1875

29	79821200-776	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 2-ԿԾ (ամսական)/**	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	6.98	100.512	14400	3600	25.128	3600	25.128	3600	25.128	3600	25.128
30	79821200-777	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-ԿԾ (ամսական)/**	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.49	39.088	11200	2800	9.772	2800	9.772	2800	9.772	2800	9.772
31	79821200-778	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև ԱԲԾ (ամսական)/**	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.49	41.88	12000	3000	10.47	3000	10.47	3000	10.47	3000	10.47
32	79821200-779	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև ՄԾ (ամսական)/**	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.49	41.88	12000	3000	10.47	3000	10.47	3000	10.47	3000	10.47
33	79821200-780	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 2-ԿԾ (տարեկան)/**	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, կազմված 3 թերթից մետաղակար, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	14.85	17.82	1200							1200	17.82
34	79821200-781	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-արտ (ամսական)/**	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.49	41.88	12000	3000	10.47	3000	10.47	3000	10.47	3000	10.47

35	79821200-784	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-էներեգետիկա (տարեկան)/	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	7.99	15.98	2000							2000	15.98
36	79821200-785	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-զբոսաշրջություն (եռամսյակային)/	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա:	հատ	7.99	20.774	2600	650	5.1935	650	5.1935	650	5.1935	650	5.1935
37	79821200-786	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-ԲՌ (տարեկան)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.49	55.84	16000							16000	55.84
39	79821200-788	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-Տրանսպորտ (տարեկան)/	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	7.49	18.725	2500							2500	18.725
40	79821200-789	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 13-ԿԱՊ (ամսական)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա:	հատ	3.79	9.096	2400	600	2.274	600	2.274	600	2.274	600	2.274
41	79821200-790	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-ՏԳ (տարեկան)/	A4 չափսի կազմված 3 թերթից, մետաղակար, որոնցից 2 թերթը երկկողմանի տպագրություն, 1 թերթը միակողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	14.85	59.4	4000							4000	59.4

42	79821200-791	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 6-Ֆ (եռամսյակային)/	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	7.49	29.96	4000	1000	7.49	1000	7.49	1000	7.49	1000	7.49
43	79821200-792	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 3-Ֆ (տարեկան)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, կազմված 3 թերթից մետաղակար, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	14.85	59.4	4000							4000	59.4
44	79821200-793	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /3-Ֆ (տարեկան), 1-ՏԳ (տարեկան) հաշվետվական ձևերի ամփոփ լրացման հրահանգ/	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, կազմված 2 թերթից մետաղակար, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	19.8	39.6	2000							2000	39.6
45	79821200-794	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-առևտուր (ամսական)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.2	230.4	72000	18000	57.6	18000	57.6	15000	48.0	21000	67.2
47	79821200-798	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև թիվ 1-հաշվառում (եռամսյակային)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.79	12.128	3200							3200	12.128
49	79821200-800	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև թիվ 29-ԳՏՀ (տարեկան)/	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	7.49	29.96	4000					4000	29.96		

50	79821200-801	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն ՁԵ թիվ 29-ԳՏՀ-ոռոգված (տարեկան)/**	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	7.49	29.96	4000					4000	29.96		
51	79821200-802	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /ՁԵ թիվ 29-ԳՏ (ամսական)/**	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա:	հատ	3.99	5.985	1500							1500	5.985
52	79821200-803	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /ՁԵ թիվ 29-ԳՏՀ (ամսական)/**	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.59	41.285	11500	8500	30.515					3000	10.77
53	79821200-804	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /ՁԵ թիվ 3-ԳՏՀ/**	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.79	11.37	3000							3000	11.37
54	79821200-805	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ցուցակ 2/**	A3 չափսի կազմված 2 թերթից, որոնցից 1 թերթը երկկողմանի տպագրություն, 1 թերթը միակողմանի տպագրություն, մետաղակար, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	13.6	299.2	22000	22000	299.2						
55	79821200-806	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Տեղեկանք (ամսական) /**	A4 չափսի միակողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.49	24.43	7000	7000	24.43						

56	79821200-807	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 24-գտ ամսական/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա:	հատ	3.99	5.985	1500							1500	5.985
57	79821200-808	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 6-ԳՏՀ (տարեկան)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա:	հատ	3.98	4.975	1250							1250	4.975
58	79821200-809	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 9-ԳՀ (տարեկան)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա:	հատ	3.98	4.975	1250							1250	4.975
59	79821200-810	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ցուցակ 1/	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	7.49	61.418	8200							8200	61.418
60	79821200-811	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հարցաթերթ թիվ 1 (ամսական)	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, կազմված 2 թերթից մետաղակար:	հատ	19.8	34.65	1750	1000	19.8	750	14.85				
61	79821200-812	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Հարցաթերթ թիվ 1 (տարեկան)/	A4 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	3.49	42.229	12100							12100	42.229

62	79821200-813	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հարցաթերթ թիվ 2 ամսական/**	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա:	հատ	7.98	18.753	2350	1350	10.773					1000	7.98
63	79821200-814	**Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև թիվ 11-ՀՄ (տարեկան)/**	A3 չափսի երկկողմանի տպագրություն, միագույն, տպագրված 60 գ/մ2-ոց օֆսեթային թղթի վրա, փաթեթավորված 1000 հատերով:	հատ	6.9	110.4	16000							16000	110.4
Ընդամենը						1833.738			548.103		168.785		204.255		912.595

Կատարողը տպագրված նյութերը մատակարարում է ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական 3 տուն հասցեով:

***Տպագրման ծառայությունների մատուցման պարտադիր պայման է Պատվիրատուի կողմից կատարողին տպագրման վերջնաժամկետից առնվազն 30 օրացուցային օր առաջ հաշվետվական ձևերի նմուշների էլեկտրոնային տարբերակի տրամադրումը: Նշված ժամկետում Պատվիրատուի կողմից էլեկտրոնային տարբերակի չտրամադրման դեպքում չտրամադրված նմուշի տպագրման անհրաժեշտությունը բացակայում է:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ վիճակագրական կոմիտե
ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011011021
Գլխավոր քարտուղար
Ա. Հայրապետյան _____
Կ.Տ (ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

Դավիթ Քոչարյան ԱՁ
Ք. Երևան, Վ. Համբարձումյան 4
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2471202340560000
ՀՎՀՀ 37488199
Դ. Քոչարյան _____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 11 » փետրվարի 2020թ. կնքված N << ԿԿ-ԳՀԱՇՁԲ-2020/1-2
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ. դրամ

հրավերով նախատես-ված չափաբաժ-նի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդա-մենը
11	79821200-758	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-վի (տարեկան)/										9.95	9.95	9.95	9.95
12	79821200-759	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 7-ժավ (տարեկան)/										15.98	15.98	15.98	15.98
13	79821200-760	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 1- բնակֆոնդ տարեկան/										9.95	9.95	9.95	9.95
15	79821200-762	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 1-ԹԱՇ (եռամսյակային) վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգ/		9.45	9.45	9.45	9.45	9.45	9.45	9.45	9.45	9.45	9.45	9.45	9.45
16	79821200-763	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ոչ պետական փոքր և գերփոքր կազմակերպություններում թափուր աշխատատեղերի,										19.95	19.95	19.95	19.95

		աշխատողների թվաքանակի և աշխատատեղերի շարժի մասին հետազոտության հարցաթերթ/													
17	79821200-764	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 1-Ա (տարեկան)/										133.65	133.65	133.65	133.65
20	79821200-767	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 1-կադրերի ուսուցում (տարեկան)/										14.6	14.6	14.6	14.6
27	79821200-774	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / 2-ԳԻՆ ԳՅՈՒՂ/		11.88	11.88	23.76	23.76	23.76	35.64	35.64	35.64	47.52	47.52	47.52	47.52
28	79821200-775	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-գին (արտադրանք) (ամսական)/		3.1875	3.1875	6.375	6.375	6.375	9.5625	9.5625	9.5625	12.75	12.75	12.75	12.75
29	79821200-776	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 2-ԿՇ (ամսական)/		25.128	25.128	50.256	50.256	50.256	75.384	75.384	75.384	100.512	100.512	100.512	100.512
30	79821200-777	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-ԿՇ (ամսական)/		9.772	9.772	19.544	19.544	19.544	29.316	29.316	29.316	39.088	39.088	39.088	39.088
31	79821200-778	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև ԱԲՇ (ամսական)/		10.47	10.47	20.94	20.94	20.94	31.41	31.41	31.41	41.88	41.88	41.88	41.88
32	79821200-779	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև ՄՇ (ամսական)/		10.47	10.47	20.94	20.94	20.94	31.41	31.41	31.41	41.88	41.88	41.88	41.88
33	79821200-780	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 2-ԿՇ (տարեկան)/										17.82	17.82	17.82	17.82
34	79821200-781	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-արտ (ամսական)/		10.47	10.47	20.94	20.94	20.94	31.41	31.41	31.41	41.88	41.88	41.88	41.88
35	79821200-784	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն										15.98	15.98	15.98	15.98

		/Ձև 1-էներեգետիկա (տարեկան)/													
36	79821200-785	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1- զբոսաշրջություն (եռամսյակային)/		5.1935	5.1935	10.387	10.387	10.387	15.5805	15.5805	15.5805	20.774	20.774	20.774	20.774
37	79821200-786	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-ԲՌ (տարեկան)/										55.84	55.84	55.84	55.84
39	79821200-788	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-Տրանսպորտ (տարեկան)/										18.725	18.725	18.725	18.725
40	79821200-789	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 13-ԿԱՊ (ամսական)/		2.274	2.274	4.548	4.548	4.548	6.822	6.822	6.822	9.096	9.096	9.096	9.096
41	79821200-790	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-ՏԳ (տարեկան)/										59.4	59.4	59.4	59.4
42	79821200-791	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 6-Ֆ (եռամսյակային)/		7.49	7.49	14.98	14.98	14.98	22.47	22.47	22.47	29.96	29.96	29.96	29.96
43	79821200-792	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 3-Ֆ (տարեկան)/										59.4	59.4	59.4	59.4
44	79821200-793	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /3-Ֆ (տարեկան), 1-ՏԳ (տարեկան) հաշվետվական ձևերի ամփոփ լրացման հրահանգ/										39.6	39.6	39.6	39.6
45	79821200-794	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև 1-առևտուր (ամսական)/		57.6	57.6	115.2	115.2	115.2	163.2	163.2	163.2	230.4	230.4	230.4	230.4
47	79821200-798	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն										12.128	12.128	12.128	12.128

		/Ձև թիվ 1-հաշվառում (եռամսյակային)/													
49	79821200-800	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև թիվ 29-ԳՏՀ (տարեկան)/							29.96	29.96	29.96	29.96	29.96	29.96	29.96
50	79821200-801	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն Ձև թիվ 29-ԳՏՀ-ոռոգված (տարեկան)/							29.96	29.96	29.96	29.96	29.96	29.96	29.96
51	79821200-802	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև թիվ 29-ԳՏ (ամսական)/										5.985	5.985	5.985	5.985
52	79821200-803	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև թիվ 29-ԳՏՀ (ամսական)/		30.515	30.515	30.515	30.515	30.515	30.515	30.515	30.515	41.285	41.285	41.285	41.285
53	79821200-804	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև թիվ 3-ԳՏՀ/										11.37	11.37	11.37	11.37
54	79821200-805	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ցուցակ 2/		299.2	299.2	299.2	299.2	299.2	299.2	299.2	299.2	299.2	299.2	299.2	299.2
55	79821200-806	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Տեղեկանք (ամսական) /		24.43	24.43	24.43	24.43	24.43	24.43	24.43	24.43	24.43	24.43	24.43	24.43
56	79821200-807	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 24-գտ ամսական/										5.985	5.985	5.985	5.985
57	79821200-808	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 6-ԳՏՀ (տարեկան)/										4.975	4.975	4.975	4.975
58	79821200-809	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Ձև 9-ԳՀ (տարեկան)/										4.975	4.975	4.975	4.975
59	79821200-810	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն										61.418	61.418	61.418	61.418

		/Ցուցակ 1/													
60	79821200-811	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հարցաթերթ թիվ 1 (ամսական)		19.8	19.8	34.65	34.65	34.65	34.65	34.65	34.65	34.65	34.65	34.65	34.65
61	79821200-812	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն / Հարցաթերթ թիվ 1 (տարեկան)/										42.229	42.229	42.229	42.229
62	79821200-813	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հարցաթերթ թիվ 2 ամսական/		10.773	10.773	10.773	10.773	10.773	10.773	10.773	10.773	18.753	18.753	18.753	18.753
63	79821200-814	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ձև թիվ 11-ՀՄ (տարեկան)/										110.4	110.4	110.4	110.4
Ընդամենը				548.103	548.103	716.888	716.888	716.888	921.143	921.143	921.143	1833.738	1833.738	1833.738	1833.738

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ վիճակագրական կոմիտե
ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 02507509
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011011021
Գլխավոր քարտուղար՝
Ա. Հայրապետյան _____
Կ.Տ (ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

Դավիթ Քոչարյան ԱՁ
Ք. Երևան, Վ. Համբարձումյան 4
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2471202340560000
ՀՎՀՀ 37488199
Դ. Քոչարյան _____
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 11 » փետրվարի 2020թ. կնքված N ՀՀ ՎԿ-ԳՀԱՇՁԲ-2020/1-2
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«11» փետրվարի 2020թ. կնքված N ՀՀ ԿԿ-ԳՀԱՇՁԲ-2020/1-2
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն